ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 24.11.2017 թ. թիվ 8 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի նախագահ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ

ՀՈՎՀ. ՎԱՐՅԱՆ

_____2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված համաձայնագրով Հայաստանը հռչակվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ողջ իշխանությունն անցնում է Հայաստանի հեղափոխական կոմիտեին (Հայհեղկոմ)՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ: Նույն օրը Հայհեղկոմի հրամանագրով Ներքին գործերի ժողովրդական կոմիսար (ՆԳԺԿ) է նշանակվում Իսահակ Դովլաթյանը: Նոր իշխանություններն առաջնահերթ քայլեր են ձեռնարկում միլիցիան կադրերով ապահովելու համար: Կազմակերպվում են իրավապահ համակարգի աշխատակիցների նախապատրաստման դասընթացներ: Դասընթացները կամ միլիցիայի դպրոցները գործել են տարբեր ժամանակահատվածներում, սակայն դրանք չեն ունեցել

համակարգված, տևական բնույթ և հանդես չեն եկել որպես երկարաժամկետ կրթական ծրագեր իրականացնող ուսումնական հաստատություններ:

2. Խորհրդային Միությունում, քաղաքական փոփոխություններով պայմանավորված, փոփոխվել են Խորհրդային Հայաստանի համար կադրեր պատրաստող ուսումնական հաստատությունների կարգավիճակները: Սկսած 1950-ական թթ. կեսերից՝ հայկական միլիցիան չուներ կադրեր պատրաստող ուսումնական հաստատություն: Իրավական համակարգի աշխատակիցները գործուղվում էին՝ ԽՍՀՄ տարբեր ուսումնական հաստատություններում սովորելու, ինչը հանգեցնում էր լրացուցիչ ֆինանսական ծախսերի: Սակայն հետագայում ԽՍՀՄ իշխանությունները միութենական հանրապետություններում հիմնեցին միլիցիայի միջնակարգ մասնագիտական դպրոցներ, որտեղ պատրաստվելու էր կրտսեր ու միջին հրամանատարական կազմը: 1966 թ. հունիսի 16-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության, ապա կառավարության հրամանագրով հիմնվում է Երևանի միլիցիայի միջին մաս-նագիտական դպրոցը, որտեղ ուսումնառությունը երկու տարի էր և հաստատությունը ավարտածներին շնորհվում էր կրտսեր լեյտենանտի կոչում: Մինչև 1990-1991 թթ. Երևանի միլիցիայի միջին մասնագիտական դպրոցը գործել է ԽՍՀՄ ՆԳՆ բարձրագույն կուրսերի, իսկ 1991-1995 թթ.՝ որպես **ՀՀ ՆԳՆ միլիցիայի բարձրագույն դպրոցի կարգավիճակով:**

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1995 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցի մասին» N 197 որոշմամբ[1] ստեղծվում է **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը:** Այնուհետև՝ երկու տարի անց, ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ ստեղծվեց **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցը:** Նշված որոշմամբ սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության բարձրագույն դպրոցը պետական բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնական խնդիրներն էին՝

1) իրավաբանական և ճարտարագիտական կրթությամբ հրամանատարական կազմի մասնագետների պատրաստումը,

2) ներքին գործերի համակարգի միջին և ավագ հրամանատարական կազմի որակավորման բարձրացումը և վերապատրաստումը,

3) գիտամանկավարժական կադրերի պատրաստումը,

4) ներքին գործերի և ազգային անվտանգության մարմինների գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը:

[1] Տես ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 311-Ն որոշման 1-ին կետը:

Դպրոցի ուսումնագիտական կառուցվածքային ստորաբաժանումը ֆակուլտետն էր, որն ստեղծվում էր ըստ ընդհանուր մասնագիտական կողմնորոշման կամ ըստ գործունեության բնույթի: Ֆակուլտետի կազմում գործում էին ամբիոններ և այլ ուսումնագիտական ստորաբաժանումներ:

4. ՀՀ կառավարության 1999 թվականի սեպտեմբերի 14-ի «ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 311 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 566 որոշմամբ դպրոցը վերանվանվեց **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոց:** Պետք է նշել, որ այս պարագայում գրեթե ամբողջովին պահպանվեց նախորդ կանոնադրությունը, և դպրոցի խնդիրներն ու գործառույթները մնացին անփոփոխ: Անհրաժեշտ է նկատել, որ այս փոփոխությամբ ուժը կորցրեց կանոնադրության 24-րդ կետի երկրորդ պարբերությունը, որով սահմանվում էր, որ դպրոց ընդունվելու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ժամկետային զինվորական ծառայություն անցած ու Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության մարմիններում մեկ տարուց ոչ պակաս ծառայության մեջ գտնվող անձինք: Հենց այս փոփոխությունն էլ առկա ուսուցման ձևով կրթություն ստացող առաջին և երկրորդ կուրսերի սովորողներին (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայություն անցած սովորողների և իգական սեռի սովորողների) զորանոցում պահելու կարգի իրավական հիմքն է ստեղծում:

5. Հաջորդ փոփոխությունը կատարվեց ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 16-ի թիվ 485-Ն որոշմամբ, որով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության բարձրագույն դպրոցը վերանվանվեց **Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիա:** Կարևորագույն ձեռքբերում էր ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» թիվ 1184-Ն որոշման ընդունումը: Կանոնագիրքը բաղկացած էր 2 բաժիններից՝

1) առաջին բաժնում սահմանվում էին՝

ա. ակադեմիայի դիմորդների ընտրությունը և ընդունելության հիմունքները,

բ. ակադեմիայում ուսումնական գործընթացի կազմակերպումը,

գ. ակադեմիայի շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորումը,

դ.ակադեմիայի գիտամանկավարժական և գիտական մասնագետների պատրաստումը,

ե. Հայաստանի Հանրապետության (այլ պետությունների) այլ պետական բուհերից ուսանողների տեղափոխումն ակադեմիա,

զ. ակադեմիայից սովորողների ազատումը, ուսումնառության դադարեցումը, վերականգնումը և նույն կուրսում թողնելը,

է. ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորումը և կազմակերպումը,

2) երկրորդ բաժնում սահմանվում էին՝

ա. ոստիկանության ուսումնական կենտրոնում ուսումնական դասակների կազմավորումը,
բ. կենտրոնում ուսումնական գործընթացի կազմակերպումը,
գ. կենտրոնի դասախոսական անձնակազմի աշխատանքների նորմավորումը և կազմակերպումը,
դ. կենտրոնից թեկնածուների ու ծառայողների ազատումը և ուսուցմանն առնչվող այլ դրույթներ:
6. Կանոնագրքով նախատեսված էին նաև ուսումնական գործընթացը կարգավորող տարբեր տեղեկանքների և փաստաթղթերի նմուշներ: Հետագայում կանոնագրքում 2005, 2008, 2010 և 2011 թվականներին կատարվեցին բազմաբնույթ փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերում էին սովորողների ընդունելության առանձնահատկություններին, թույլատրում էին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության տարբեր տեսակներ, հստակեցվում է գիտական խորհրդի գործունեությունը և այլն: Իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի թիվ 1184-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 997-Ն որոշմամբ այն ճանաչվեց ուժը կորցրած: ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշմամբ վերակազմակերպվեց «**ՀՀ ոստիկանության ակադեմիա**» **ՊՈԱԿ-ը**, իսկ նշված որոշման 9-րդ կետով ուժը կորցրած ճանաչվեց Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 311 որոշումը: Նշված որոշմամբ հաստատված կանոնադրության 16-րդ կետի «զ» ենթակետով սահմանվեց, որ ՀՀ ոստիկանությունը հաստատում է առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները: Նշված կետի համաձայն՝ 2008 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ոստիկանության պետը ստորագրում է «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 15-Ն հրամանը: Առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգը գործեց մինչև 2010 թվականը, իսկ իրավական հիմքը վերացավ ինչպես «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որի 1-ին կետի 11-րդ ենթակետով հանվեցին

«նորմատիվ հրամանով, ակադեմիայի պետի ներկայացմամբ, հաստատում է առկա ուսուցման ձևով սովորողներին զորանոցում պահելու կարգն ու պայմանները» բառերը: Հետագայում 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1791-Ն որոշումը 2010, 2011, 2012 և 2014 թվականներին ենթարկվեց փոփոխությունների, սակայն կարևորագույն փոփոխությունը տեղի ունեցավ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի թիվ 615-Ն որոշմամբ, որով «Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվեց «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կրթահամալիր): Նշված որոշմամբ սահմանվեց. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև նախնական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր: Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիայի իրավահաջորդն է»: Կրթահամալիրի ստեղծումը, ըստ էության, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 354-Ն որոշմամբ հաստատված ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի «Կրթական բարեփոխումներ» բաժնի 8-17-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացման տրամաբանական արդյունքն էր, որով նախատեսվում էր ոստիկանության միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատություն) կազմակերպում, կրթական աստիճանական համակարգի ներդրում:

7. Ներկայումս Կրթահամալիրը, կանոնադրությանը համապատասխան, իրականացնում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև՝ նախնական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթական ծրագրեր: Մասնավորապես՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը իրականացնում է **ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիան** (այսուհետ՝ Ակադեմիա), որի կազմում գործում է իրավագիտության (բաղկացած է 6 ամբիոններից), հեռակա ուսուցման, ոստիկանական զորքերի հրամանատարական (բաղկացած է ընդհանուր և ՈՌՏՊ ամբիոնից) ֆակուլտետները և մագիստրատուրայի բաժանմունքը,

2) միջին մասնագիտական կրթությունը իրականացնում է **ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջը**, որի կազմում գործում է ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետը, որը բաղկացած է 4 ամբիոններից,
3) նախնական մասնագիտական կրթությունը իրականացնում է **ուսումնական կենտրոնը**, որը բաղկացած է 2 կրթաճյուղերից,
4) լրացուցիչ կրթությունը իրականացնում է **վերապատրաստման և ատեստավորման ֆակուլտետը**, որտեղ ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի «Ոստիկանության ծառայողի վերապատրաստում անցնելու կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 174-Ն որոշմամբ սահմանված կարգով վերապատրաստում են անցնում ՀՀ ոստիկանության ծառայողները, ինչպես նաև՝ գերատեսչությունների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ՝ քրեակատարողական վարչության և ռազմական ոստիկանության ներկայացուցիչները,
5) **ուսումնամեթոդական և զարգացման վարչությունը** իրականացնում է ուսումնական գործընթացի կազմակերպումն ու վերահսկումը, միջազգային համագործակցության կազմակերպումը, ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, Կրթահամալիրի ընդհանուր և հատուկ գրադարանների գործունեության կազմակերպումը, կատարում է այլ գործառույթներ,
6) **գիտական աշխատանքների բաժինը** իր լիազորությունների շրջանակներում համակարգում և ամփոփում է ամբիոնների գիտական գործունեությունը, գիտական խմբակների կատարած աշխատանքը, կազմակերպում է գիտական միջոցառումներ, Կրթահամալիրի ասպիրանտների ընդունելությունը և ուսուցումը, հանդիսանում է «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի խմբագրությունը, կատարում է այլ գործառույթներ,
7) **կրթության որակի ապահովման բաժանմունքը** մշակում է Կրթահամալիրի ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերը, ՈԱ գործընթացների իրականացման նպատակով աջակցություն է տրամադրում բոլոր ստորաբաժանումներին, պահպանում է որակի միասնական չափանիշները, կատարում է այլ գործառույթներ:
8. Կրթահամալիրում գործում են նաև հետևյալ ստորաբաժանումները, որոնք իրականացնում են իրենց մասնագիտական գործառույթները՝
1) քարտուղարություն,
2) ծառայության բաժին,
3) կադրերի և ԱՀՏԱ բաժին,
4) տնտեսական բաժին,
5) ֆինանսական բաժին,
6) գնումների խումբ,
7) հերթապահ մաս,
8) բուժմաս:

II. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

9. Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է ***բարձրագույն*** (իրավաբանական կրթությամբ (բակալավր և մագիստրոս), ինչպես նաև՝ համազորային և մանկավարժական կրթությամբ հրամանատարական կազմի մասնագետների պատրաստում) և ***հետբուհական մասնագիտական*** (իրավաբանական ուղղությամբ գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, ոստիկանության գործունեության հետ կապված հիմնախնդիրների գիտական մշակումը, իրավագիտության բնագավառում հետազոտությունների իրականացումը), ինչպես նաև՝ ***նախնական***, ***միջին մասնագիտական*** (ոստիկանական կրթությամբ մասնագետների պատրաստումը) ***և լրացուցիչ կրթական ծրագրեր***: Նշված կրթական ծրագրերով Կրթահամալիրի առաքելությունն է կրթության զարգացման ոլորտում պետական և հանրային անհրաժեշտությամբ պայմանավորված ռազմավարական ծրագրերի շրջանակներում գիտելիքների ստեղծումը, փոխանցումը և տարածումը: Նշված առաքելությունը նպատակ ունի նախապատրաստել այնպիսի կադրեր, ովքեր՝

1) կկարողանան առավելագույնս նպաստել Հայաստանի Հանրապետության իրավական և հասարակական անվտանգության ամրապնդմանը,
2) կկարողանան օրենքի սահմաններում ապահովել մարդու անվտանգությունը, սեփականության բոլոր ձևերի, ինչպես նաև՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանությունը,
3) կկարողանան նախականխել, կանխել և խափանել հանցագործությունները ու վարչական իրավախախտումները,
4) կկարողանան հայտնաբերել և բացահայտել հանցագործությունները,
5) կկարողանան մատուցել որակյալ իրավաբանական օգնություն և հանրային որակյալ ծառայություններ:

10. Կրթահամալիրն իր առջև դրված խնդիրների լուծումը տեսնում է երկրի տնտեսության կարիքներին և հասարակության կրթական ու տեխնոլոգիական պահանջմունքներին հնարավորինս համահունչ կրթական ու գիտական ծրագրերի ստեղծման և իրականացման ճանապարհով:

11. Կրթահամալիրն իր առջև դրված խնդիրների լուծման ընթացքում էապես կարևորում է նաև պրոֆեսորադասխոսական կազմի և սովորողների մասնագիտական և անձային որակների բարելավումը:

12. Կրթահամալիրի առաքելությունը միտված է՝ ուսումնագիտական ոլորտում ուսուցման և հետազոտությունների իրականացման նոր մեթոդների ներդրմամբ ապահովելու հանրային կարիքների ապահովման համար անհրաժեշտ կադրերի պատրաստումը: Կադրերի պատրաստման հարցում Ակադեմիան նպատակ ունի լուծել ոչ միայն մասնագիտական որակի ապահովման խնդիրը, այլև՝ կառավարչական և

անձնական պատասխանատվության բարձր որակներով օժտված մասնագետների պատրաստման հարցը:

III. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՀԵՌԱՊԱՏԿԵՐԸ

13. Հավատարիմ իր առաքելությանը՝ Կրթահամալիրը ձգտում է դառնալ՝

1) որակյալ կադրեր պատրաստող և հետազոտական առաքելություն իրականացնող ճանաչված ուսումնական հաստատություն, որն էական դերակատարություն կունենա հանրապետության սոցիալ-իրավական զարգացման և հանրային ծառայությունների մատուցման ոլորտին վերաբերող ազգային և տարածաշրջանային ծրագրերում,

2) իրավաբանական և ոստիկանական կրթության առաջատար տարածաշրջանային կենտրոն, որն ապահովում է գիտակրթական բարձրորակ ծրագրեր ու դրանց գլոբալ մրցունակությունը՝ ուսումնական գործընթացի, գիտական հետազոտությունների և գիտակրթական ինովացիոն մոտեցումների համադրման ճանապարհով,

3) ուսումնական հաստատություն, որտեղ մուտքը և կրթական ռեսուրսները մատչելի են սովորողների ամենատարբեր սոցիալական և տարիքային խմբերին,

4) ուսումնական հաստատություն, որը հարմարունակ է միջավայրի փոփոխություններին, արագ և համարժեք է արձագանքում պետության և հասարակության փոփոխվող կարիքներին, աշխատաշուկայի պահանջարկին,

5) ուսումնական հաստատություն, որտեղ սովորողներին պատրաստում են լիարժեք կարիերայի, մասնագիտական առաջընթացի, նորաստեղծության և ղեկավար դերի համար,

6) ուսումնական հաստատություն, որտեղ պետք է կարևորվի արհեստավարժ, տեսական և պրակտիկ բարձր գիտելիքներ ունեցող սովորողների պատրաստման խնդիրը,

7) ուսումնական հաստատություն, որն ապահովում և քաջալերում է ազատ հաղորդակցության և առարկայական բանավեճի հնարավորություն բոլորի համար՝ դրանով իսկ վերջիններիս դարձնելով մասնակիցն ու պատասխանատուն փոփոխությունների, զարգացման ու արդյունքի համար,

8) ուսումնական հաստատություն, որն առաջնորդվում է գլոբալ հեռանկարով՝ ուղենիշ ունենալով իր գործունեության համակողմանի միջազգայնացումը և լիարժեք մասնակցությունը միջազգային ինտեգրման գործընթացներին:

IV. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

14. Կրթահամալիրն իր պատմության ընթացքում ձևավորել է որոշակի մնայուն արժեքներ և ավանդույթներ, որոնք միավորում են դասախոսների և սովորողների մի քանի սերունդների՝

1) **Ուսումնական հաստատության ձեռքբերումների կատարելագործում և շարունակական զարգացման ապահովում:** Հավատարիմ իր արմատներին՝ Կրթահամալիրը պարտավոր է պահպանել լավագույն ավանդույթները և ապահովել արժեքների շարունակելիությունը, ստեղծել մթնոլորտ, որտեղ նոր գաղափարներն ու անցյալի ավանդույթները փոխխաչասերվում և փոխհարստացնում են միմյանց՝ նպաստելով Կրթահամալիրի ինքնության պահպանմանն ու կայունությանը: Ստեղծումից ի վեր ուսումնական հաստատությունը հետևել է մի հիմնական փիլիսոփայության՝ սովորեցնել տեսությունը գործնական խնդիրների ու կիրառության միջոցով, որն էլ եղել է հաջողություն լավագույն գրավականը:

2) **Սովորողի հաջողությունն ու բավարարվածությունը Կրթահամալիրի հաջողության հայելին են:** Կրթահամալիրն իր աշխատանքի արդյունավետության ցուցիչ միշտ համարել է սովորողի կրթական հաջողությունը: Հետևաբար, արդյունավետ և հաջող ուսումնառությանը նպաստող պայմանների և ծառայությունների ստեղծումն ու զարգացումը շարունակում է մնալ Կրթահամալիրի առաջնահերթ խնդիրը:

3) **Եզակի դեր ու սոցիալական պատասխանատվություն:** Որպես ՀՀ գերատեսչական պատկանելության ուսումնական հաստատություն, Կրթահամալիրը եզակի դեր ու պատասխանատվություն ունի երկրում իրավական և հասարակական անվտանգության ապահովման նպատակով կադրերի պատրաստման գործում: Կրթահամալիրի եզակի սոցիալական պատասխանատվության կոլեկտիվ զգացումը պետք է միավորի հաստատության անցյալը, ներկան և ապագան:

4) **Կրթահամալիրիը որպես էթիկական մոդել սովորողների և միջավայրի համար**: Կրթահամալիրն իր ամբողջ պատմության ընթացքում մի յուրօրինակ էթիկական մոդել է եղել իր սովորողների և արտաքին միջավայրի համար՝ հավատարիմ մնալով այնպիսի արժեքների, ինչպիսիք են՝ արհեստավարժ բարեխղճությունն ու անաչառությունը, ազնվությունն ու փոխադարձ հարգանքը: Կրթահամալիրը պարտավոր է ձևավորել այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որը կնպաստի վարքագծի ընդհանուր էթիկական սկզբունքների և չափանիշների պահպանմանն ու զարգացմանը աշխատանքային և այլ փոխհարաբերություններում, մասնավորապես, սովորող-դասախոս փոխհարաբերություններում, և, այս առումով, ունենալ նաև դրական ներգործություն արտաքին միջավայրի վրա: Կրթահամալիրը պետք է օգնի սովորողներին՝ գիտակցելու էթիկական վարքագծի կարևորությունը իրենց հետագա մասնագիտական գործունեության և կարիերայի ընթացքում, ինչպես նաև՝ կյանքի այլ ասպարեզներում:

5) **Բաշխված պատասխանատվություն և կառավարում:** Հավատարիմ կառավարման ժողովրդավարական սկզբունքներին՝ Կրթահամալիրը ձգտում է ստեղծել կարծիքների և գաղափարների ազատ արտահայտությանը, բանավեճին և որոշումների կոլեգիալ ընդունմանը նպաստող միջավայր: Բարեփոխումների փորձը ցույց է տալիս, որ գործերը հատկապես լավ են ընթանում այնտեղ, որտեղ որոշումներ

իրականացնողներն անմիջականորեն մասնակցել են դրանց ընդունմանը, և, այդպիսով, պատասխանատվությունը բաշխվում է բոլոր կատարողների միջև: Կրթահամալիրի յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա՝ արտահայտելու իր անձնական տեսակետը, իրազեկ լինի սպասվող փոփոխություններին: Պետք է շարունակվեն ջանքերը՝ բաշխված կառավարման և կոլեգիալության սկզբունքների արմատավորման ուղղությամբ:

6) **Միջազգային չափանիշներով ուսուցման որակ:** Ուսուցման որակը շարունակում է մնալ Կրթահամալիրի հիմնական նախապատվությունը՝ մեծապես պայմանավորելով Կրթահամալիրի արտաքին մրցունակությունն ու նրա շրջանավարտների ծառայունակությունը: Կրթահամալիրն ընթանում է Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման ուղիով, ուստի մեզ համար ուղենիշ են կրթության որակի եվրոպական չափանիշները:

7) **Սովորողների կրթական առաջընթացը:** Կրթահամալիրում առաջնային է համարվում սովորողի կրթական առաջընթացը: Ուստի ողջ ներուժը կենտրոնացվում է սովորողի մտավոր ներուժը զարգացնելու, մասնագիտական խորը գիտելիքներով բարձրորակ մասնագետի և արժանապատիվ քաղաքացու պատրաստման վրա:

8) **Փոխադարձ հարգանք և վստահություն:** Կրթահամալիրը առաջնահերթ է համարում փոխադարձ հարգանքի և փոխվստահության վրա հիմնված միջավայրի առկայությունը՝ այն համարելով կարևոր գործոն իր առաքելությունն իրականացնելիս:

9) **Ազնվություն և թափանցիկություն:** Կրթահամալիրում կարևորվում է սովորողի և աշխատողի ակադեմիական ազնվությունը և ընթացիկ գործունեության թափանցիկության ապահովումը:

10) **Ոստիկանության համակարգի մասնագիտական ռեսուրսի որակի մշտադիտարկում և կրթության կազմակերպման գործառույթից բխող համարժեք արձագանքի ապահովում:** Կրթահամալիրը, նպատակ ունենալով պարբերաբար բարելավել ՀՀ ոստիկանության կադերի որակը, իրականացնում է ոստիկանության գործունեության մշտադիտարկում և վերջինիս համապատասխան՝ կրթության նոր ձևերի և մեթոդների ներդրում:

V. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1. ԲԱՐՁՐՈՐԱԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

15. **Վերանայել գործող կրթական ծրագրերի գծով ուսումնառության կազմակերպման և իրականացման որակն ու արդյունավետությունը՝** ներդնելով որակի գնահատման և ապահովման միասնական ներքին համակարգ:

16. **Կրթության որակը և կրթական ծրագրերի արդիականությունը** Կրթահամալիրի համար կարևորագույն նախապայմաններից են և շուկայական մրցունակության պայմաններում ապահովում են շրջանավարտների համար մասնագիտական հիմնական երաշխիքներ: Այս առումով կարևորվում են որակի գնահատման և ապահովման ներքին գործող համակարգի առկայությունը,

առաջարկվող կրթական ծրագրերի անվանացանկի համապատասխանությունը շուկայի առկա պահանջմունքներին, ինչպես նաև՝ դրանց բովանդակային և կառուցվածքային պարբերական կատարելագործումը՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան:

17. Կրթահամալիրի զարգացման առանցքային ուղղությունների շարքում կարևորվում է **հաստատության միջազգայնացումը**, որի համատեքստում շարունակում է կարևորվել մերձեցումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին: Վերջինս ենթադրում է վերախմբագրված ECTS չափանիշների ու պահանջների պահպանում որակի ներքին ապահովման համակարգերում, ինչը հանգեցնում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցման որակի գնահատման և շարունակական բարելավման կատարելագործված, Բոլոնիայի գործընթացի պահանջներին համահունչ մոտեցումների ձևավորման և ներդրման:

18. Կրթահամալիրի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է նաև մատուցված կրթության որակի ոչ միայն ներքին գնահատումն ու ապահովումը, այլև՝ **որակի արտաքին գնահատումն ու հավաստումը հանրության լայն շրջաններում:** Այս առումով, նկատի ունենալով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականության ապահովման աճող անհրաժեշտությունն ու ՄԿՈԱԱԿ[2] չափանիշները, խիստ կարևորվում է Կրթահամալիրի ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքների և Կրթահամալիրի գործունեության հետագա բարելավման արժևորումն ու նախապատրաստումը պարբերական արտաքին մոնիթորինգներին և ինստիտուցիոնալ հավատարմագրմանն ու հնարավոր ծրագրային հավատարմագրմանը:

19. **Նպատակ 1. Տրամադրել ուսանողի կրթական կարիքներին և աշխատաշուկայի բավարարվածությանը համահունչ կրթական ծրագրեր՝ հագեցած կրթական արդիական մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով:**

20. **Խնդիր 1.1. Կազմել մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը արտահայտող փաստաթղթերը՝ ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան:**

21. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) կազմել նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերի (առկա և հեռակա) կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերը,

2) կազմել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրեր՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ,

3) վերանայել կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի

[2] Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ, գործում է 2008 թ.-ից:

կազմակերպման (նախագծում, պլանավորում, իրականացում) կարգերը, անհրաժեշտության դեպքում կազմել նշված գործընթացը կարգավորող անհրաժեշտ կարգեր կամ ընթացակարգեր,

4) մշակել ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան կրթության ոլորտի ենթաոլորտային շրջանակները,

5) մշակել սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգ,

6) ստեղծել հենանշման (բենչմարքինգ) կարգը և լավագույն փորձի ուսումնասիրության և տարածման քաղաքականությունը,

7) գնահատել ՄԿԾ-ների առկա վիճակը, իրականացնել կարիքների վերլուծություն,

8) ընդլայնել և բարելավել շահակիցների ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման, իրականացման և մշտադիտարկման աշխատանքներում,

9) ապահովել դասավանդման, ուսումնառության և արդյունքների գնահատման միասնական չափանիշների գործարկումը կրթական ծրագրերում,

10) ապահովել էլեկտրոնային համակարգում կիրառվող որակի գնահատման չափանիշների և գործառույթների առավելագույն թափանցիկություն ներքին և արտաքին շահեկիցների համար և ընթացիկ արդյունքների հրապարակայնացում, ստեղծել անհրաժեշտ և բարենպաստ պայմաններ՝ ապահովելու սովորողների լայն մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում:

22. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) հաստատված և վերանայված կրթական ծրագրերի չափորոշիչներ և մասնագրեր,

2) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի առկայություն՝ արդի միջազգային ծրագրային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջմունքներին համահունչ,

3) ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համահունչ կրթական ծրագրեր,

4) դասավանդման, ուսումնառության և գնահատման միասնական չափանիշներ,

5) ուսուցման որակի՝ եվրոպական արժևորման չափանիշների պահանջներին համահունչ գնահատման և ապահովման ներքին համակարգեր:

23. **Խնդիր 1.2. Ապահովել ուսումնական գործընթացի, հետազոտական և ստեղծագործական գործունեության միասնականությունը:**

24. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ստեղծել հետազոտական գործունեության որակի ապահովման համակարգ՝ ներառելով անձնային և մասնագիտական առաջընթացի ապահովման և գնահատման կառուցակարգեր,

2) բարելավել սովորողների հետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմները կրթական ծրագրերի և ենթակառուցվածքային մակարդակներում՝ ապահովելով հետազոտական գործունեության պայմանները,

3) որակապես բարելավել շրջանավարտների գործնական պատրաստականության բաղադրիչը, բազմազանեցնել և հնարավորինս երկարաժամկետ ու արդյունավետ դարձնել արտադրական և հետազոտական պրակտիկաները, նպաստել ավարտական կուրսերում ուսուցման հետ համատեղված պատվիրատու կազմակերպություններում արտադրական փորձառության ձեռքբերման հնարավորությունների ընդլայնմանը,
4) ներդնել սովորողների էլեկտրոնային թղթապանակի (պորտֆոլիո) տեխնոլոգիան՝ պրակտիկայի և մասնագիտական առաջընթացի մշտադիտարկման համար,
5) բարելավել կրթական ծրագրերում հետազոտական գործունեության իրականացման, գնահատման և արդյունքների վավերացման համակարգերը,
6) վերանայել սովորողների գրավոր և ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ձևերը՝ ընդլայնելով ստեղծագործական-հետազոտական աշխատանքների ծավալը,
7) հիմնել կրթության որակի ապահովման գործընթացները լուսաբանող էլեկտրոնային հարթակ:

25. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) որակի ապահովման համակարգի՝ անձնային և մասնագիտական առաջընթացի ապահովման և գնահատման կառուցակարգերի առկայություն,
2) հետազոտական բաղադրիչի և պայմանների պարելավում,
3) պրակտիկայի կազմակերպման կարգերի և ծրագրերի թարմացված վիճակ,
4) կրթության որակի ապահովման գործընթացները լուսաբանող էլեկտրոնային հարթակի առկայություն,
5) սովորողների գրավոր և ինքնուրույն աշխատանքների ստուգման և գնահատման ձևերի վերանայված ընթացակարգեր:

26. **Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների և գործընթացների արդյունավետությունը:**

27. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) մշակել Կրթահամալիրի գործունեության հիմնական ոլորտների, կրթական ստորաբաժանումների և միավորների ինքնագնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և ՄԿՈԱԱԿ-ի որդեգրած հավատարմագրման չափորոշիչները և չափանիշները,
2) բարելավել կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային, ռեսուրսային ապահովվածության գնահատման, մասնագիտական կրթական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման, վերանայման գործող ներքին չափանիշները և ընթացակարգերը,
3) նախաձեռնել և իրականացնել Կրթահամալիրի կրթական գործունեության ինքնագնահատման գործընթաց՝ Կրթահամալիրի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պարբերական մշակման համար,

4) նախապատրաստել Կրթահամալիրը մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին, իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի հավատարմագրման փուլային գործընթացները,
5) կազմել և կիրառել Կրթահամալիրի ֆակուլտետի, ամբիոնի, դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման վարկանիշավորումը,
6) կատարելագործել կրթական գործունեության որակի ապահովման և մշտադիտարկման համակարգերը,
7) բարելավել սովորողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման չափանիշները, բողոքարկման համակարգերը, ապահովել դրանց առավել հրապարակայնությունն ու հետևողական կիրառումը, թափանցիկությունը,
8) մշակել կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացի արդյունավետ և որակյալ կառավարման համար պահանջվող ներքին տեղեկատվության փաթեթներ:

28. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) ՄԿՈԱԱԿ-ի լրամշակված չափանիշներով և չափորոշիչներով իրականացված Կրթահամալիրի ինքնավերլուծություն և ինստիտուցիոնալ հավատարմագրում,
2) կրթական ծրագրերի պահանջներին համապատասխանող գործուն ներքին չափանիշներ և ընթացակարգեր,
3) կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պարբերական մշակում և ընթացակարգերի առկայություն,
4) Կրթահամալիրի ֆակուլտետի, ամբիոնի, դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման վարկանիշավորում,
5) սովորողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ բարելավման համար առկա համակարգեր և ընթացակարգեր:

29. **Խնդիր 1.4. Ներդնել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստում առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայն կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:**

30. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ստեղծել նորարարական կրթական միջավայր սովորողների և դասախոսների շրջանում կրթական էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով,
2) զարգացնել կրթական գործընթացների սուբյեկտների ուսումնական համագործակցության տեխնոլոգիաները համաչափ բաշխված, ճկուն և բաց տեղեկատվական-հաղորդակցական միջավայրի ստեղծման միջոցով,

3) մշակել և ներդնել էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող ինտերակտիվ դասընթացներին ներկայացվող պահանջներն ապահովող չափանիշներ և չափորոշիչներ,
4) ստեղծել կրթական անհատական մոտեցումների իրականացման հնարավորություն էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթի և հարթակի միջոցով,
5) վերապատրաստել դասախոսական կազմին ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և դասավանդման, ուսանողներին՝ կիրառման և ուսումնառության համար,
6) ներդնել սովորողների կրթական առաջխաղացման մշտադիտարկման համակարգ առցանց կրթական հարթակի հիման վրա,
7) մշակել դասախոսների և սովորողների գործունեության մշտադիտարկման ընթացակարգեր էլեկտրոնային առցանց ուսուցման և հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառման պայմաններում:

31. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) ուսումնառության որակի բազմագործոնային գնահատման էլեկտրոնային առցանց գործիքամիջոցների գործող համակարգ՝ ներառյալ կրթական ծրագրերի մշակման և իրականացման փուլային գործընթացների էլեկտրոնային կառավարումը,
2) էլեկտրոնային հարթակի և համացանցի սոցիալական ռեսուրսների, սոցիալական մեդիայի միասնականացման միջոցով կազմակերպվող համապատասխան աշխատանքներ առկայություն,
3) կրթական անհատական մոտեցումների իրականացման հնարավորություն էլեկտրոնային ուսումնամեթոդական փաթեթի և հարթակի միջոցով,
4) ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և դասավանդման համար դասախոսների համապատասխան վերապատրաստումներ, սովորողներին վերապատրաստել էլեկտրոնային հարթակներին միանալու և օգտվելու համար,
5) դասախոսների և սովորողների գործունեության մշտադիտարկման ընթացակարգեր էլեկտրոնային առցանց ուսուցման և հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառման համար:

32. **Խնդիր 1.4. Նախատեսել հետազոտական բաղադրիչի ներմուծումը և զարգացումը բարձրագույն կրթության բակալավրի և մագիստրոսի աստիճաններում՝ կայուն և չափելի հետազոտական և նորարարական կարողությունների ձևավորման միտումով:**

33. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) բարձրագույն կրթության բակալավրի և մագիստրոսի աստիճաններում նախատեսել հետազոտական կարողությունների ձեռքբերմանն ու կիրառմանը նպատակաուղղված ֆակուլտատիվ (սերտիֆիկատային) պարտադիր դասընթացներ,
2) մասնագիտական առարկաներից առաջադրվող կուրսային նախագծերում, ըստ հնարավորության (մասնագիտության կամ առարկայի բնույթից կախված), ներմուծել

հետազոտական նվազագույն տարրեր, ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում ավելացնել հետազոտական ու ինովացիոն բաղադրիչները,

3) շարունակել բարելավել մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ամրապնդման առկա փորձը, միասնականացնել գիտական սեմինարների, հետազոտական պրակտիկայի և հետազոտական աշխատանքի բովանդակային և կազմակերպական պահանջներն ու իրականացման կարգը,

4) մշակել և փորձարկել մագիստրոսի կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչներից ձևավորված առանձին արդյունարար ՄՈԳ-ի անհրաժեշտ նվազագույն շեմի ներմուծման առաջարկություն՝ որպես հետագա կրթության կամ մասնագիտական առաջխաղացման համար արտոնություն ընձեռող լրացուցիչ պայման,

5) հետազոտական Կրթահամալիր դառնալու հեռապատկերով ուղղորդված՝ վերաարժևորել Կրթահամալիրի ուսանողական գիտական խմբակների առաքելությունը՝ ուղենիշ ունենալով էապես ակտիվացնել նրանց գործունեությունը և բարձրացնել արդյունավետությունը՝ ուսանողության շրջանում հետազոտական ձիրքերի ու հետաքրքրությունների սերմանման հարցերում:

34. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական բաղադիրչի ներմուծում,

2) բարելավված մագիստրոսական ծրագրեր՝ ամրապնդված հետազոտական բաղադրիչով և համապատասխանորեն վերանայված որակական ամփոփիչ պահանջներով,

3) կրթական վերջնարդյունքներով պայմանավորված ուսումնառության արդյունավետության և կրթության որակի գնահատման նոր ձևեր և մեխանիզմներ:

35. **Խնդիր 1.5. Կրթության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացման նպատակով բարելավել դասավանդման և ուսումնառության կազմակերպման, գիտելիքների գնահատման տեխնոլոգիաները:**

36. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ուսումնառության արդյունավետության և կրթության որակի գնահատման նպատակով ներմուծել կրթական վերջնարդյունքներով (գիտելիք-հմտություն-կարողություն) պայմանավորված սովորողների գնահատման նոր ձևեր ու մեխանիզմներ և սահմանել առանձին արդյունարար պահանջներ ընդհանուր ու մասնագիտական կրթափուլերի համար,

2) նպաստել և խրախուսել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ցուցաբերվող ինովացիոն նախաձեռնությունները, խթանել հետազոտությունները բարձրագույն և, հատկապես, իրավաբանական կրթության մեթոդաբանության ասպարեզում՝ ներառելով այն Կրթահամալիրի տարեկան գիտաժողովների թեմատիկ ցանկում,

3) ներդնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներբուհական մեխանիզմներ, բարձրացնել Կրթահամալիրի դասախոսների կատարելագործման կենտրոնի դերն ու նշանակությունը դասավանդման արդի մեթոդների ու ձևերի յուրացման հարցում,
4) կրթական տարբեր աստիճաններում կիրառել ուսումնառության և դասավանդման «ոչ ստանդարտ» արդյունավետ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները (այդ թվում՝ հրավիրված մասնագետների կողմից), սեմինարներն ու քննարկումները, «ուղեղային գրոհներն» ու գործնական խաղերը, ամառային դպրոցները և այլն՝ նախապատվությունը տալով դասավանդման ինտերակտիվ մեթոդներին,
5) կատարելագործել ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման և կառավարման գործող համակարգը՝ այն ապահովելով տվյալների ավտոմատացված մուտքագրման և վիճակագրական մշակման, ինչպես նաև՝ եռալեզու ակադեմիական տեղեկագրերի ու դիպլոմի հավելվածի ձևավորման վեբ-պորտալային հնարավորություններով:

37. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) ինքնակառուցվածքի կարճաժամկետ և երկարաժամկետ գործող ծրագրի առկայություն,
2) ակադեմիական առաջադիմության արդյունքների էլեկտրոնային գրանցման և կառավարման գործող համակարգ,
3) սովորողների գնահատման նոր ձևեր ու մեխանիզմներ և առանձին արդյունարար պահանջներ ընդհանուր ու մասնագիտական կրթափուլերի համար,
4) առաջավոր փորձի և խրախուսման ներկրթահամալիրային մանկավարժական առաջավոր փորձի տարածման մեխանիզմների առկայություն,
5) դասավանդման նորագույն տեխնոլոգիաներով ուսուցման գործընթացի կազմակերպում:

VI. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

38. **Ամրապնդել Կրթահամալիրում կադրային ներուժը, ստեղծել բարենպաստ աշխատանքային և սոցիալական պայմաններ, պահպանել և զարգացնել բարեվարքության ավանդույթները՝ ապահովելով հակակոռուպցիոն միջավայրի ձևավորման անհրաժեշտ նախադրյալներ:**

39. Բարձր որակավորում ունեցող կադրային ներուժի առկայությունը Կրթահամալիրի զարգացման, անհրաժեշտ մակարդակի կրթության ապահովման և նորարարական տեխնոլոգիաներին տիրապետող գիտամանկավարժական կադրերի պատրաստման գրավականն է: Կրթահամալիրի կադրային ներուժի կարիքների պարբերական գնահատումը, զարգացման պլանավորումը, կառավարման գործուն և

թափանցիկ մեխանիզմների ձևավորումը, կրթության որակի շարունակաբար աճող պահանջներին բավարարող պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը, կատարելագործումը և մասնագիտական առաջընթացի ապահովումը առաջիկայում ևս հանդիսանալու են Կրթահամալիրի ռազմավարական կարևորության հարցեր: Հաստատության զարգացման միտումներից ելնելով՝ կարևորվում է կադրային ներուժի արդյունավետ օգտագործումը, որակյալ վարչակազմի առկայությունը, նրա կատարելագործումը, համալրումն ու երիտասարդացումը:

40. Առկա պայմաններում կարևորվում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ **դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացումը, հաստիքախնայողական քաղաքականության վարումը, դասախոսների դասավանդման արդյունավետության բարձրացումը:**

41. Կրթահամալիրի զարգացման ծրագրերը պահանջում են ուսանողական ինքնավարության զարգացում, սովորողների կողմից պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման գործող չափորոշիչների կատարելագործում, կրթական գործընթացների թափանցիկության ապահովման գործում ուսանողական կառույցների դերակատարության մեծացում:

42. Առաջիկա ռազմավարական խնդիրների լուծման համար առաջնային է համարվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովումը էթիկական և մասնագիտական վարքագծի կանոնների ներդրման, ավանդույթների և ձևավորված մնայուն արժեքների պահպանման, դասախոսական անձնակազմի և ուսանողության միջև փոխադարձ հարգանքի և վստահության վրա հիմնված թափանցիկ աշխատանքային փոխհարաբերությունների ձևավորման ճանապարհով: Այս համատեքստում հատուկ կարևորություն են ստացել Կրթահամալիրում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը և կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումը:

43. **Նպատակ 2. Զարգացնել Կրթահամալիրի մարդկային ռեսուրսների համակազմը, ապահովել որակյալ դասախոսական ներուժ և բարեկեցության մակարդակ, ժամանակակից աշխատանքային միջավայր:**

44. **Խնդիր 2.1. Համալրել պրոֆեսորադասախոսական անձնակազմը կրթական ծրագրերի որակի ապահովման արդի պահանջներին համահունչ կադրերով:**

45. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) իրականացնել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում ըստ մատուցվող կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջների, մասնագիտական որակների և տարիքային կազմի,

2) մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր,

3) կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշները և գործընթացները՝ սահմանելով դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների,
4) վերամշակել դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիրը՝ ապահովելով մասնագիտական վերապատրաստման պարտադիր բաղադրիչը,
5) կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝ տիրապետելու կրթական նոր տեխնոլոգիաներին, դասավանդման ինտերակտիվ մեթոդներին, մշակելու և իրականացնելու էլեկտրոնային ուսուցման դասընթացներ, իրականացնելու կրթական բարեփոխումներ և զարգացնելու որակի մշակույթ,
6) ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանիշավորման ցուցանիշների գործուն համակարգ և ճշգրիտ գնահատման ընթացակարգ,
7) քայլեր ձեռնարկել խոստումնալից կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման, նոր անհրաժեշտ կադրերի ներգրավման ուղղությամբ,
8) մշակել և իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի համալրման երկարաժամկետ ծրագիր՝ ուղղորդելով Կրթահամալիրի ասպիրանտուրայի ընդունելությունը և հայցորդության համակարգի հնարավորությունը վերոնշյալ կազմի համալրման առաջնահերթ կարիքների պահպանմանը,
9) կատարելագործել ասպիրանտների և հայցորդների մանկավարժական պրակտիկայի իրականացման պայմանները:

46. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) մարդկային ներուժի կառավարման հայեցակարգի մշակում,
2) Կրթահամալիրի զարգացման տեսլականով և ընթացիկ ռազմավարական պլանով նախատեսված ոլորտային կայացած կառուցվածք,
3) վերապատրաստված դասախոսների թվաքանակ առնվազն 50 %-ով՝ էլեկտրոնային և ժամանակակից այլ մեթոդներով դասավանդելու համար,
4) Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի համալրման երկարաժամկետ և փուլային ծրագրի առկայություն ասպիրանտների գործուն մասնակցությամբ,
5) ֆակուլտետի, ամբիոնի, դասախոսական կազմի գնահատման վարկանիշային գնահատման գործարկված համակարգ,
6) կրթական ծրագրերի մասնագրերում համապատասխան որակավորման պահանջներ,
7) դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանիշավորման ցուցանիշների գործուն համակարգ ու գնահատման ընթացակարգ:

47. **Խնդիր 2.2. Զարգացնել Կրթահամալիրի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, նպաստել վարչակազմի շարունակական համալրմանն ու որակական առաջընթացին:**

48. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) իրականացնել մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների զարգացման ծրագիր և մշակել հայեցակարգ,

2) շարունակել սովորողների, դասախոսների և աշխատողների թվաքանակների միջև արդյունավետ հավասարակշռման գործընթացը՝ նպատակ ունենալով ապահովելու հստակ հիմնավորված, որակը չխաթարող, հաստիքախնայողական քաղաքականություն,

3) կազմակերպել վարչակազմի կատարելագործման դասընթացներ կառավարման նոր մեթոդների յուրացման և ներդրման ուղղությամբ, սահմանել աշխատակազմի կատարողականի արդյունավետության գնահատման օբյեկտիվ և չափելի չափորոշիչներ,

4) խրախուսել դասախոսական կազմի մասնակցությունը Կրթահամալիրի կառավարման և որոշումների ընդունման գործընթացում:

49. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) դասախոսական կազմի գնահատման վարկանիշային համակարգի առկայություն,

2) դասախոսական կազմի տարակարգերի համար աշխատավարձի տարբերակված սանդղակներ,

3) դասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում առնվազն 20 %-ով,

4) ուսանող-դասախոս քանակական հարաբերակցության որոշում և իրագործում,

5) որակավորման բարձրացում անցած և վերապատրաստված դասախոսների թվի աճ:

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ, ՄՐՑՈՒՆԱԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

50. **Ապահովել Կրթահամալիրի գիտական ներուժի կայուն զարգացումը, հետազոտական ծրագրերի ներդրումը և դրանց հետագա արդյունավետության բարձրացումը:**

51. Կրթահամալիրը, իր ուրույն դերակատարմամբ լինելով երկրի առաջատար ՄՈՒՀ-ը, ծանրակշիռ պարտավորություն ունի Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանն ու անվտանգության ապահովմանը նպատակուղղված հետազոտական ծրագրերի ներդրման և իրականացման, երկրում իրավաբանական գիտությունների եզակի ուղղության զարգացման, իրավական մտքի և հետազոտական ներուժի ձևավորման, մասնագիտական խորհրդատվության տրամադրման հարցերում:

52. Առաջիկա տարիներին Կրթահամալիրի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը հետազոտական հաստատության հատկանիշների ձևավորումն է, ինչը ենթադրում է հետազոտական բաղադրիչի լիարժեք ներմուծումն ու զարգացումը

մասնագիտական կրթության բոլոր աստիճաններում, գիտական ներուժի կայուն զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, հետազոտական ծրագրերի ու նախագծերի արդյունավետության բարձրացումն ու ըստ կարևորության կողմնորոշումը, գործընկեր կազմակերպությունների հետ փոխշահավետ կապերի ստեղծումն ու համատեղ հետազոտությունների կատարումը, Կրթահամալիրում իրականացվող հետազոտությունների ու նորաստեղծային մշակումների պատշաճ հրապարակայնացումը և դրանց ներկայացումը միջազգային շտեմարաններում, հետազոտական ու նորարարական արդյունքների ներդրումը կրթական գործընթացում:

53. Կրթահամալիրի գիտական ներուժի արդյունավետ օգտագործման և հետագա զարգացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ինչպես դասախոսների առավելագույն ներգրավվածությունը հետազոտական և նորարարական աշխատանքներում, այնպես էլ՝ գիտական նոր կադրերի նպատակային պատրաստման գործընթացը: Վերջին խնդրի լուծման արդյունավետ ճանապարհը բովանդակային առումով վերակազմավորված ասպիրանտուրան է:

54. **Նպատակ 3. Զարգացնել Կրթահամալիրի գիտահետազոտական գործունեությունը, ձևավորել մրցունակ գիտական և նորարարական ներուժ, աստիճանաբար անցում կատարել Կրթահամալիրի հետազոտական կարգավիճակին:**

55. **ԽՆԴԻՐ 3.1. Ապահովել Կրթահամալիրի գիտական ներուժի կայուն զարգացումը ասպիրանտուրայի հեռանկարային պլանավորման, կազմակերպական կատարելագործման և հետազոտողի կրթական ծրագրի արմատական վերանայման ու բարելավման ճանապարհով:**

56. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ձևավորել ասպիրանտուրայի ընդունելության 2018-2021 թթ. հեռանկարային պլան և դրա հիման վրա կազմել գիտամանկավարժական կադրերի պատրաստման պետական պատվերի հայտերը՝ ելնելով բացառապես Կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի ու հետազոտական ներուժի փուլային, Կրթահամալիրի և հետազոտությանը հարիր աշխատուժի ձևավորման պահանջներից,

2) ապահովել ատենախոսական աշխատանքների թեմատիկայի կապը Կրթահամալիրում իրականացվող հետազոտական նախագծերի և ծրագրերի հետ, և ասպիրանտների մասնակցությունը համապատասխան նախագծերի իրականացմանը՝ ապահովելով որակյալ ասպիրանտական կրթության համար նպաստավոր հետազոտական միջավայր,

3) վերանայել Կրթահամալիրում իրականացվող հետազոտողի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը՝ նորագույն հետազոտական և կրթական տեխնոլոգիաներին տիրապետող, հետազոտական աշխատուժի շուկային անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով օժտված շրջանավարտների պատրաստման նպատակով,

4) վերանայել և հստակեցնել ատենախոսությունների գիտական ղեկավարների ընտրության սկզբունքները՝ հիմք ընդունելով թեկնածուների գիտական վաստակը, մանկավարժական հմտությունները, ինչպես նաև՝ նախորդ արդյունավետ փորձը, առաջարկվող թեմաների արդիականությունն ու արդյունավետ իրականացման անհրաժեշտ նախադրյալները, մշակել և ներդնել գիտական կադրերի պատրաստման համար ավանդ ունեցող գիտական ղեկավարների խրախուսման մեխանիզմներ,

5) ասպիրանտուրայում, որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճան, որակի ապահովման եվրոպական պահանջներին համահունչ՝ սահմանել ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողի ակադեմիական առաջընթացի գնահատման ու ատեստավորման և որակի մոնիթորինգի կանոնակարգեր ու ընթացակարգեր:

57. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) ասպիրանտուրայի ընդունելության 2018-2021 թթ. հեռանկարային պլան,

2) հետազոտողի ծրագրի վերանայված ուսումնական պլան, ուսումնական գործընթացի կազմակերպման, գնահատման ու ատեստավորման կանոնակարգեր ու ընթացակարգեր,

3) Կրթահամալիրի գիտական և այլ հետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածություն՝ ֆինանսավորվող նախագծեր՝ առնվազն 10%, բոլոր հետազոտական աշխատանքներ՝ առնվազն 80%,

4) Կրթահամալիրի գիտական նախագծերում և աշխատանքներում ուսանողների ներգրավվածություն՝ ասպիրանտներ՝ 100%, մագիստրատուրայի ուսանողներ՝ առնվազն 80%, բակալավրիատի ուսանողներ՝ առնվազն 25%,

5) ասպիրանտուրան հաջողությամբ ավարտած և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանած մասնագետներով Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական ու հետազոտական կազմի համալրման ցուցանիշ՝ առնվազն 50%,

6) Կրթահամալիրի գիտական բյուջեի աճ՝ առնվազն 10%,

7) մեկ դասախոսին բաժին ընկնող հետազոտական հատկացումների աճ՝ առնվազն 10%,

8) Կրթահամալիրի բյուջեում հետազոտությունների կատարման ու գիտական ենթակառուցվածքների կատարելագործմանն ու ստեղծմանն ուղղված ֆինանսական միջոցների հաշվեկշիռ՝ 10%,

9) գիտահետազոտական գործունեության տեղեկատվական ապահովման էլեկտրոնային շտեմարան,

10) հետազոտական արդյունքների առևտրայնացման աջակցության կառուցվածք,

11) Կրթահամալիրի դասախոսների գործունեության գիտական բաղադրիչի արդյունավետության գնահատման չափանիշներ,

12) Կրթահամալիրում հրատարկվող գիտական հանդեսների և դրանց սերիաների ընդգրկում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում՝ առնվազն 1:

58. **Խնդիր 3.2. Նպաստել Կրթահամալիրում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:**

59. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ստեղծել Կրթահամալիրի առաքելությունից բխող գիտական դպրոցներ (որոշակի գիտական թեմաներ զարգացնող գիտական ներուժ),
2) բարձրացնել մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների որակը, ստացված արդյունքները ներդնել գործնական շրջանառության մեջ,
3) նպաստել միջազգային և հանրապետական գիտական ծրագրերի մրցույթներին դասախոս-գիտնականների մասնակցության աճին,
4) բարձրացնել Կրթահամալիրի գիտական ներուժը պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով,
5) ստեղծել և խրախուսել համապատասխան գիտական հարթակ-շտեմարաններին ինտեգրված կառույցներ:

60. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) գիտական դպրոցների առկայություն,
2) մագիստրոսական և թեկնածուական որակյալ ատենախոսություններ,
3) գիտահետազոտական արդյունավետ տեղեկատվական համակարգ,
4) արդիականացված նյութատեխնիկական բազա,
5) գիտական ներուժի բարձր պահանջվածություն,
6) միջազգային գիտական նախագծերում մասնագետների ընդգրկվածության աճ,
7) դասախոսական կազմի շարժունության աճ:
8) գիտությանը երիտասարդ գիտնականների ընդգրկվածության աճ,
9) միջազգային և հանրապետական նստաշրջաններում մասնագետների մասնակցության աճ:

61. **Խնդիր 3.3. Նպաստել Կրթահամալիրում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:**

62. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) նպաստել Կրթահամալիրի գիտնականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրապարակմանը,
2) նպաստել Կրթահամալիրի դասախոսների՝ դասագրքաստեղծ գործունեությանը մասնակցությանը,
3) նպաստել Կրթահամալիրի գիտնականների գիտական արդիական մենագրությունների հրապարակմանը,
4) բարձրացնել Կրթահամալիրում հրատարակվող գիտական պարբերականների որակը,

5) ստեղծել արտասահմանյան գիտական համապատասխան կենտրոնների հետ բարձր վարկանիշ ունեցող համատեղ պարբերականներ,
6) ապահովել միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում Կրթահամալիրի դասախոսների գիտական նյութերի հրատարակումը:

63. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) Կրթահամալիրի գիտնականների կողմից հրապարակված 10 աշխատություն,
2) Կրթահամալիրի դասախոսների կողմից ստեղծված 3 դասագրքեր,
3) գիտնականների կողմից հրատարակված 10 մենագրություններ,
4) արժեքավոր մենագրությունների և նախագծերի հրատարակում,
5) միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում գիտական հոդվածների աճ:

64. **Խնդիր 3.4. Աջակցել մտավոր գործունեության արդյունքների փոխանցմանը և առաջանցիկ կրթափորձի տարածմանը:**

65. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) մշակել մտավոր սեփականության՝ որպես տնտեսական ռեսուրսի շրջանառության մոդելներ,
2) ձևավորել մանկավարժության և իրավագիտության ոլորտներում գործնական միջոցառումների ձևաչափեր,
3) մշակել Կրթահամալիրի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցման համակարգեր,
4) ապահովել Կրթահամալիրի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների ներդրման հաշվին ստացված արտաբյուջետային միջոցների աճ,
5) նպաստել Կրթահամալիրի գիտակրթական գործունեության առաջմղմանը դեպի ապրանքայնացում:

66. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) փաստաթուղթ մտավոր սեփականության շրջանառության մասին,
2) Կրթահամալիրի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցումն ապահովող քանակական աճ,
3) Կրթահամալիրի աշխատակիցների մտավոր գործունեության արդյունքների փոխանցումն ապահովող համակարգ և աշխատակիցների անհրաժեշտ քանակ,
4) մտավոր գործունեության նորմատիվային դաշտի առկայություն:

VIII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

67. Ընդլայնել գործընկերային կապերը երկրի սոցիալական, տնտեսական, տուրիզմի՝ Կրթահամալիրի պրոֆիլին բնորոշ ոլորտների և մասնագիտական հիմնական հատվածների հետ, զարգացնել մատուցվող հանրային ծառայությունների ոլորտը

և հասարակայնության հետ կապերը: Կրթահամալիրի կայուն զարգացման համար առանցքային նշանակություն ունի **պատվիրատու կառույցների հետ գործընկերային արդյունավետ կապերի առկայությունը:** Երկրի տնտեսության և արդյունաբերության արագ փոփոխվող կարիքների պայմաններում ռազմավարական աճող նշանակություն են ստանում Կրթահամալիրի պրոֆիլին բնորոշ **արտադրական ոլորտների, հասարակության հետ կապերի զարգացումը,** Կրթահամալիրի զարգացման ծրագրերում շրջանավարտների, արտաքին նվիրատուների, հովանավորների **ներդրումների մեծացումը:** Կրթահամալիրի զարգացմանը նպաստող գործոնների շարքում **կարևորվում է հասարակության հետ կապերի հետագա ամրապնդումը, նրա հասարակական վարկանիշի բարձրացումը և հանրային ծրագրերում Կրթահամալիրի առավելագույն ներգրավումը:**

68. Կրթահամալիրը պարտավոր է զարգացնել և խորացնել իր մասնակցությունը երկրի տնտեսության առջև ծառացած սոցիալ-տնտեսական, հասարակության անվտանգության ապահովման և արտադրական խնդիրների լուծման գործընթացներում, բազմակողմանիորեն ներգրավվել հանրային ծրագրերում, մասնակցել երկրի գիտահենք տնտեսության զարգացման իրականացմանը:

69. **Նպատակ 4. Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով Կրթահամալիրի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:**

70. **Խնդիր 4.1. Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում Կրթահամալիրի առավելագույն ներգրավումը:**

71. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ապահովել Կրթահամալիրի կայքէջում հաստատության վերաբերյալ օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրապարակումը,

2) ապահովել հանրային կապերի ոլորտում Կրթահամալիրի գործողությունների մշտադիտարկումը՝ PR գործունեությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու նպատակով,

3) համակարգել և նպատակաուղղել Կրթահամալիրի դրական վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները,

4) կազմակերպել հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ Կրթահամալիրի գործունեությունը հասարակության արդի պահանջներին համահունչ դարձնելու նպատակով,

5) ներգրավվել հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային, միջազգային և համազգային ծրագրերում,

6) կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած շրջանավարտների և ուսանողների միջև,

7) ապահովել Կրթահամալիրի կայքում կրթական ծրագրերի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն՝ արտաքին և ներքին շահակիցների համար:

72. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) պարբերաբար թարմացվող Կրթահամալիրի կայքէջ,
2) հրատարակված սեփական տեղեկատվական և քարոզչական նյութեր,
3) արդյունավետ գործող PR համակարգ, մշտադիտարկման ընթացակարգ,
4) Կրթահամալիրի վարկանիշի ամրապնդմանն ու բարձրացմանն ուղղված միջոցառումների թվի աճ 30%-ով,
5) հեռուստառադիոհաղորդաշարերի պատրաստում,
6) հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրման վերլուծական զեկույցներ,
7) ներգրավվում հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային, միջազգային և համազգային թվով չորս ծրագրերում,
8) շրջանավարտների և ուսանողների միջև կազմակերպված տասներկու հանդիպումներ:

73. **Խնդիր 4.2. Զարգացնել Կրթահամալիրի հիմնական սոցիալական ծրագրերը, ապահովել սոցիալական ծառայությունների պահպանումն ու պայմանների բարելավումը:**

74. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) մշակել և իրականացնել աշխատակիցների սոցիալական կարգավիճակի մակարդակի շարունակական բարելավման հնգամյա ծրագիր,
2) ստեղծել հանրօգուտ նոր ծառայություններ՝ օգտագործելով շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացների կազմակերպման փորձը և խորհրդատվական տեղեկատվական ներուժը՝ դրանք հասանելի դարձնելու լայն հանրությանը,
3) ապահովել Կրթահամալիրի հիմնական սոցիալական ծրագրերի համակողմանի զարգացումն ու մատչելիությունը Կրթահամալիրի բոլոր աշխատակիցների և ուսանողների համար (սննդի համալիր, հանգստի կազմակերպման բազաներ, մանկապարտեզ): Պարբերաբար անցկացնել սննդի կետերի սահմանած գների և սննդի որակի մոնիթորինգ,
4) նպաստել Կրթահամալիրում մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացմանը, խթանել ուսանողների և աշխատողների ակտիվ մասնակցությունը Կրթահամալիրի մշակութային և մարզական կյանքին:

75. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) արհեստակցական աշխատանքների գնահատման արդյունքներ,
2) հանրության լայն շրջանակներին տրվող կրթական, իրավաբանական ծառայություններ,
3) գիտխորհրդի կողմից հաստատված գործող սոցիալական ծրագրեր,

4) պարբերաբար անցկացվող սննդի կետերի սահմանած գների և սննդի որակի մոնիթորինգի արդյունքների վերլուծական զեկույց,
5) Կրթահամալիրի մշակութային և մարզական կյանքին ակտիվորեն ներգրավված ուսանողներ և աշխատողներ,
6) ուսանողների և աշխատակիցների առողջության ամրապնդման, ֆիզիկական կարողությունների և հմտությունների ձևավորման համար գործող համակարգ:

IX. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

76. Ապահովել Կրթահամալիրի գործունեության միջազգայնացումը, ընդլայնել նրա միջազգային ճանաչման շրջանակը և խթանել շարունակական ներգրավումը միջազգային գիտակրթական գործընթացներում: Կրթահամալիրի զարգացման առանցքային ուղղությունների շարքում կարևորվում է համակողմանի միջազգայնացումը, որը բարձրագույն կրթության զարգացման արդի միտումներից է: Այստեղ, որպես ռազմավարական թիրախ, հանդես է գալիս Կրթահամալիրի մեր-ձեցումն ու ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածքներին՝ միաժամանակ պահպանելով և զարգացնելով ավանդական համագործակցային կապերը նաև ԱՊՀ և, հատկապես, ՌԴ ՆԳՆ բարձրագույն կրթության համակարգերի հետ: Այս համատեքստում հատուկ կարևորություն են ստանում այնպիսի ռազմավարական խնդիրներ, ինչպիսիք են՝ **Կրթահամալիրի միջազգային կապերի ընդլայնումն ու բազմազանեցումը, կրթական ծրագրերի միջազգայնացումը, սովորողների և դասախոսների ակադեմիական շարժունության հնարավորությունների ընդլայնումը, կրթության որակի միջազգային ստանդարտների ապահովումն ու, որպես հետևանք, Կրթահամալիրի ընդլայնվող միջազգային ճանաչումը և վարկանիշի բարձրացումը:**
77. Բարձր միջազգային վարկանիշի ձեռքբերման համար կարևոր նախապայման է նաև Կրթահամալիրի միջազգային գիտական հեղինակության բարձրացումը, ինչը ենթադրում է միջազգային գիտահետազոտական ծրագրերում մասնակցության ակտիվացումն ու եվրոպական գիտական տարածքում ինտեգրման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը: Այն ներառում է նաև միջազգային գիտական համագոր-ծակցության առկա ցանցի ընդլայնում և բազմազանեցում, արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակում, միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցություն, ինչպես նաև՝ միջազգային գիտական կոնսորցիումներում և գիտատեղեկատվական ցանցերում աճող ներգրավվածություն:
78. Կրթահամալիրի միջազգայնացման ընդհանուր համատեքստում կարևորվում են նաև նրա զարգացման ծրագրերում արտասահմանյան շրջանավարտների, արտաքին հովանավորների և այլ նվիրատուների ներդրումների մեծացումը և

միջազգային գործունեության կառավարման անհրաժեշտ ինստիտուցիոնալ-կազմակերպական հենքի զարգացումը:

79. **Նպատակ 5. Ապահովել Կրթահամալիրի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել հաստատության գործունեության միջազգայնացումը:**

80. **Խնդիր 5.1. Ընդլայնել և բազմազանեցնել Կրթահամալիրի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները եվրոպական համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում:**

81. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) ընդլայնել Կրթահամալիրի միջազգային համագործակցության ուղղությունները հաստատության զարգացման ծրագրին համահունչ,
2) ընդլայնել Կրթահամալիրի համագործակցությունը ՄԱԿ-ի կառույցների հետ (UNESCO, UNICEF, UNECE, UNDP, GEF)՝ «Վերափոխենք մեր աշխարհը մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագիրը, հատկապես կայուն զարգացման նպատակները Հայաստանի Հանրապետությունում տեղայնացնելու և իրականացնելու ուղղությամբ,
3) աջակցել Կրթահամալիրի բոլոր ֆակուլտետներին՝ ներգրավվելու միջազգային համագործակցության ծրագրերում,
4) բարելավել Կրթահամալիրի միջազգային գործունեության տեղեկատվական համակարգը՝ մշտապես կազմակերպելով միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվություն,
5) խթանել Կրթահամալիրի սովորողների և գիտամանկավարժական կազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին, բարձրացնել ներգնա և արտագնա շարժունության ծրագրերում նրանց մասնակցությունը,
6) նպաստել օտարերկրյա հրավիրված դասախոսների՝ Կրթահամալիր պարբերական այցելություններին և ընդլայնել ֆակուլտետների կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները,
7) ներդնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը,
8) հետևել ուսանողական օժանդակ ծառայությունների մատուցման ասպարեզում միջազգային լավագույն փորձին,
9) նպաստել Կրթահամալիրի ուսանողական կազմակերպությունների արտաքին կապերի զարգացմանը և ներգրավմանը միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում:

82. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) միջազգային համագործակցության ծրագրերի թվի ավելացում 10 %-ով,

2) համագործակցություն ՄԱԿ- ի կառույցների հետ, «Վերափոխենք մեր աշխարհը մինչև 2030 թ. կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրին համահունչ ներկրթահամալիրային առնվազն երկու ծրագրեր և միջոցառումներ,
3) Կրթահամալիրի միջազգային գործունեության գործող, բարելավված տեղեկատվական համակարգ, առնվազն 50% տեղեկացված դասախոսական կազմ և առնվազն 80% ուսանողներ,
4) ներգնա և արտագնա շարժունության ծրագրերին մասնակցության թվի աճ 20%-ով, առնվազն հինգ միջազգային փոխանակման ծրագրեր,
5) ֆակուլտետների կրթական ծրագրերին օտարերկրյա հրավիրված դասախոսների մասնակցության թվի աճ 20%-ով,
6) ամառային դպրոցի շրջանակներում ներգրավված օտարերկրյա բուհերի թվի աճ, ամառային դպրոցում ներգրավված օտարերկրյա և տեղական ուսանողների թվի աճ,
7) տարեկան հաշվետվություններ կատարված աշխատանքի շուրջ, բարելավված ուսանողական ծառայություններ, հարցումների արդյունքներ,
8) ուսանողական կազմակերպությունների ներգրավվում առնվազն մեկ միջազգային կազմակերպությունում և մեկ ծրագրում,

83. **Խնդիր 5.2. Ընդլայնել Կրթահամալիրի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել հաստատության ներգրավվմանը եվրոպական հետազոտական տարածքին:**

84. **Խնդրի լուծման համար անհրաժեշտ գործողություններ և ռազմավարական ուղղություններ՝**

1) խթանել Կրթահամալիրի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել Կրթահամալիրի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին,
2) խթանել Կրթահամալիրի գիտական համագործակցությունը արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտական կենտրոնների հետ, համատեղ նախագծերի նախաձեռնումը ու իրականացումը երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում,
3) աջակցել Կրթահամալիրի մասնագետների մասնակցությանը ‹‹Էրազմուս պլյուս››, ‹‹Հորիզոն›› միջազգային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը՝ կազմակերպելով տեղեկատվական սեմինարներ և վերապատրաստումներ,
4) աջակցել Կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում, դրանց ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման ուղղությամբ ցուցաբերել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն,
5) աջակցել դասախոսների գիտական ստաժավորմանը արտասահմանյան առաջատար գիտահետազոտական կազմակերպություններում և նրանց փորձի ակտիվ ներդրմանը Կրթահամալիրում,

6) նպաստել արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքներին,
7) աջակցել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակմանը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությանը:

85. **Առաջընթացի գնահատման ցուցիչներ՝**

1) Կրթահամալիրի ներգրավումը Եվրոպական հետազոտական տարածքին, միջազգային հետազոտական ծրագրերի թվի աճ,
2) գիտահետազոտական համատեղ նախագծերի թվի աճ երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում,
3) միջազգային հետազոտական ծրագրերում Կրթահամալիրի գիտամանկավարժական կազմի և ասպիրանտների ընդգրկվածության թվի աճ 10%-ով,
4) արտասահմանում գիտական ստաժավորում անցած առնվազն քսան դասախոսներ,
5) արտասահմանյան գործընկերների հետ համատեղ գիտահետազոտական և փորձագիտական աշխատանքների թվի աճ 20%-ով,
6) արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակման թվի աճ առնվազն 10%-ով,
7) միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցության աճ առնվազն 20 %-ով: